Հավելված

ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավարի

2025թ. հունվարի 29-ի թիվ 008-Ա որոշման

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Շինուհայրի երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

30.01.2025

Սյունիքի մարզի Տաթևի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ «**Շինուհայրի երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ հաստատություն) տնօրենի** թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

<u>Հաստատության տնօրենն իրականացնում է հետևյալ հիմնական գործառույթները՝</u>

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում գործարքներ.

բ) նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.

գ) տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

դ) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

ե) աշխատանքի է նշանակում ու աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

զ) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

է) արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

ը) իրականացնում է մանկավարժական կադրերի և սպասարկող անձնակազմի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար.

թ) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

ժ) գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով հաստատությանը պատճառած վնասի համա:

Հաստատության տնօրենի հիմնական աշխատավարձի չափը կազմում է 127188 (մեկ հարյուր քսանյոթ հազար հարյուր ութսունութ) ՀՀ դրամ:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացիներն, ովքեր ունեն՝

1) բարձրագույն կրթություն.

2) հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

3) բավարարում են ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 22-ի N539-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով սահմանված պահանջներին:

Մրցույթի մասնակիցների՝ վերոնշյալ կետերով նախատեսված պահանջները հավասարապես բավարարելու դեպքում մրցութային հանձնաժողովի կողմից մասնակցին հաղթող ճանաչելու մասին որոշում կայացնելիս կարող են հաշվի առնվել նաև հետևյալ լրացուցիչ պայմանները՝

1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.

3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ.

5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.

6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Մրցույթը կկայանա 2025 թվականի մարտի 4-ին, ժամը 11:00-ին, Տաթևի համայնքապետարանի վարչական շենքում՝ Սյունիքի մարզ, գյուղ Շինուհայր, Կենտրոնական փողոց N14 հասցեում:

Մրցույթին մասնակցելու համար դիմող քաղաքացիները Տաթևի համայնքապետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն՝

1) դիմում.

2) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.

3) քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.

4) ինքնակենսագրություն.

5) անձնագրի կամ նույնականացման քարտի, բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի, արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող

ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակները և պատճենները.

6) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.

7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Մրցույթին մասնակցելու համար դիմած **քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝** անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է 2025 թվականի փետրվարի - 17ը:

Փաստաթղթերն ընդունվում են Տաթևի համայնքապետարանի աշխատակազմում՝ Սյունիքի մարզ, գյուղ Շինուհայր, Կենտրոնական փողոց N14 հասցեում, ամեն օր ժամը՝ 09:00-ից մինչև 18:00-ն, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային մյուս օրերից:

Մրցույթի պայմաններին հանգամանալից ծանոթանալու համար դիմող քաղաքացիները կարող են ուսումնասիրել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N02-Ն հրամանը, ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 22-ի N539-Ն որոշումը և այլ իրավական ակտերը՝ Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի www.arlis.am պաշտոնական կայքում:

Մրցույթի մյուս պայմաններին ծանոթանալու, ինչպես նաև լրացուցիչ այլ տեղեկություններ ստանալու համար դիմող քաղաքացիները կարող են զանգահարել +37494224266 հեռախոսահամարով կամ գրել https://tatevhamaynq.am/ էլեկտրոնային փոստի հասցեին: